

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 13/1

19 մարտի 2013թ.

Քննարկվեց <Վարդանի Ջարթոնքը> ՍՊԸ տնօրենի 07.03.2013թ. դիմում-գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 25.02.2013թ. թիվ 212713 որոշման դեմ:

<Վարդանի Ջարթոնքը> ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) տնօրենի դիմում-գանգատում մասնավորապես նշված է.

համաձայն Կապանի ՏՀՏ պետի 25.02.2013թ-ի թիվ 212713 որոշման (այսուհետ նաև Որոշում) ենթարկվել եմ վարչական պատասխանատվության՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասով՝ 20.000 (քսան հազար) դրամ գումարով: Որոշումն իմ կողմից ստացվել է 01.03.2013թ-ին:

Համաձայն որոշման, վարչական պատասխանատվության եմ ենթարկվել 2012թ. 4-րդ եռամսյակում դուրս գրված (գնորդներին տրված) և/կամ մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքը սահմանված ժամկետում (մինչև 20.01.2013թ.) հարկային մարմիններին չներկայացնելու համար:

Հայտնում եմ, որ ընկերությունը 2012թ-ի 4-րդ եռամսյակի ընթացքում հաշիվներ դուրս չի գրել, ինչպես նաև մատակարարներից հարկային հաշիվներ չի ստացել: Համաձայն <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 10-րդ պարբերության՝ վերը նշված տեղեկանքը հարկային մարմիններին չի ներկայացվում, եթե հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները ենթակա չեն ներառման հարկային մարմիններին ներկայացման ենթակա տեղեկանքում, իսկ նշված տեղեկանքում Ընկերության կողմից ներառման ենթակա հաշիվներ չկան, քանի որ այդպիսի հաշիվներ պարզապես չկան:

Նշված խնդրի հետ կապված զանգահարել եմ նաև ՊԵԿ թեժ գիծ, որտեղից նույնպես հաստատել եմ իմ դիրքորոշման հիմնավորվածությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, խնդրում եմ անվավեր ճանաչել Կապանի ՏՀՏ պետի 25.02.2013թ-ի թիվ 212713 որոշումը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, հաշվի առնելով դիմում-գանգատում բերված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

<Հարկերի մասին> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. <Հարկային մարմնի պաշտոնատար անձանց այն գործողությունների գանգատարկումը, որոնք կապված են վարչական տուգանքի նշանակման հետ, կատարվում է վարչական իրավախախտումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան>:

Համաձայն <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի. <Սույն հոդվածով սահմանված տեղեկանքը հարկային մարմին չի ներկայացվում, եթե այլ պայմաններում դրանում ներառվելիք բոլոր հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները սույն հոդվածի համաձայն ենթակա չեն ներառման հարկային մարմին ներկայացվող տեղեկանքում>:

Իր հերթին, համաձայն ՀՀ կառավարության 07.07.2011թ-ի թիվ 937-Ն որոշմամբ հաստատված «Հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքը հարկային մարմիններին ներկայացնելու» կարգի 4-րդ կետի. «ԱԱՀ վճարող համարվող անձինք յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով իրենց հաշվառման վայրի հարկային մարմիններին ներկայացնում են տեղեկանք այն հարկային հաշիվների վերաբերյալ, որոնցում ցույց տրված հարկվող շրջանառության մեծությունը (առանց ԱԱՀ-ի) գերազանցում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված չափը: Տեղեկանքում ներառվում (արտացոլվում) են տեղեկություններ հաշվետու ժամանակաշրջանի համար դուրս գրված (գնորդներին տրված) և մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ»:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաշվետու ժամանակաշրջանում (2012թ-ի 4-րդ եռամսյակ) ընկերության կողմից դուրս չեն գրվել և մատակարարներից չեն ստացվել հարկային հաշիվներ, հետևապես նշված ժամանակաշրջանի համար «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված տեղեկանքը հարկային մարմին ենթակա չէր ներկայացման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Բեկանել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 25.02.2013թ. թիվ 212713 որոշումը և գործը կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

